

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար
պրն. Մ. ՇԱՀԳԵԼԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Շահգելյան

Ի կատարումն Ձեր 05.03.2009թ. N ՇՄ-350 հանձնարարականի, ի լրումն մեր 17.02.2009թ. N 12/Ն-48 գրության, ներկայացնում եմ ՀՀ քաղաքաշինության նախարարության 04.03.2009թ. N ՔՆ-26/703 գրությամբ ներկայացրած նոր առաջարկությունների և ՀՀ ֆինանսների նախարարություն 13.03.2009թ. դիտողությունների հաշվառմամբ լրամշակված «Հայաստանի Հանրապետության տարածքի սեյսմիկ շրջանացման նոր քարտեզի կազմման աշխատանքների տեխնիկական առաջադրանքը, նախահաշիվը և աշխատանքների կատարման ժամանակացույցը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը:

Առդիր՝ 11 էջ:

Հարգանքով՝

ՊԵՏ

Ա.ԱՆՏՈՆՅԱՆ

Կատարող՝ Ռ. Բաղդասարյան

Հեռ. 36-15-62 (2-23)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՍԵՅՄՄԻԿ ՇՐՋԱՆԱՑՄԱՆ ՆՈՐ ՔԱՐՏԵԶԻ
ԿԱԶՄՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՆԻՒԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ, ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ԵՎ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության տարածքի սեյսմիկ շրջանացման նոր քարտեզի կազմման աշխատանքների տեխնիկական առաջադրանքը (հավելված 1), նախահաշիվը և աշխատանքների կատարման ժամանակացույցը (հավելված 2):
2. Հայաստանի Հանրապետության տարածքի սեյսմիկ շրջանացման նոր քարտեզի կազմման աշխատանքների պատվիրատու ճանաչել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը:
3. Հայաստանի Հանրապետության տարածքի սեյսմիկ շրջանացման նոր քարտեզի կազմման աշխատանքներն իրականացնել ըստ ժամանակացույցի՝ համաձայն N 2 հավելվածի:
4. Հայաստանի Հանրապետության տարածքի սեյսմիկ շրջանացման նոր քարտեզի կազմման աշխատանքների իրականացման համար Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությանը, բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «424000» այլ մասնագիտական ծառայություններ հողվածով, հատկացնել 6000.0 հազ. դրամ՝ 2009 թվականի երրորդ եռամսյակից սկսած՝ յուրաքանչյուր եռամսյակ 3000.0 հազ. դրամ համամասնություններով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ՝

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱՂՈՒՆՔ

ՀՀ տարածքի սեյսմիկ շրջանացման նոր քարտեզի կազմման

- I. Քարտեզի կազմման աշխատանքների բովանդակությունը և հաշվետվության ներկայացման պահանջները.
 1. ՀՀ տարածքի երկրաբանական և տեկտոնական կառուցվածքների հետազոտություն, ՀՀ և հարակից (ՀՀ սահմաններից 150 կմ հեռավորությամբ) տարածքների համար երկրաբանական և տեկտոնական կառուցվածքների ու ժամանակակից շարժումների 1:500 000 մասշտաբի քարտեզների կազմում:
 2. Երկրաֆիզիկական և երկրաքիմիական դաշտերի հիմնական բնութագրերի /պարամետրերի/ ուսումնասիրություններ:
 3. Ակտիվ խզվածքների և այլ կառուցվածքային տարրերի առանձնացում. ՀՀ տարածքի ակտիվ խզվածքների և ակտիվ բլոկների 1:200 000 մասշտաբի և հարակից տարածքների 1:500 000 մասշտաբի քարտեզների կազմում:
 4. ՀՀ և հարակից տարածքների նախապատմական և պատմական ուժեղ ($M_s \geq 5.5$) երկրաշարժերի մակրոսեյսմիկ տվյալների կիրառմամբ նոր կատալոգի ստեղծում և նոր իզոսեյստերի կառուցում:
 5. ՀՀ և հարակից տարածքներում 1962-2009թթ. տեղի ունեցած 3.5 և ավելի մագնիտուդով երկրաշարժերի գործիքային գրանցումների ուսումնասիրություն, երկրաշարժերի կատալոգի համալրում:
 6. Սեյսմիկ ակտիվության քարտեզագրում և սեյսմիկության վերլուծություն, առանձնացված սեյսմիկ ակտիվության յուրաքանչյուր գոտու համար սեյսմիկ ռեժիմի վերլուծություն /սեյսմիկ ռեժիմի հիմնական պարամետրերի որոշում/:
 7. Սեյսմատեկտոնական նոր մոդելի կառուցում և սեյսմածին գոտիների ՀՀ տարածքի համար՝ 1:500 000 և հարակից տարածքների համար՝ 1:200 000 մասշտաբի քարտեզի կազմում:
 8. Սեյսմածին գոտիներից միջին կարգի գրունտային պայմանների համար /ՀՀ տարածքի՝ 1:200 000 մասշտաբին և ՀՀ հարակից տարածքների՝ 1:500 000 մասշտաբին համապատասխան/ առավելագույն հորիզոնական արագացումների գնահատում:
 9. Սեյսմիկ վտանգի հավանականային գնահատում և հավանականային մեթոդով ՀՀ տարածքի սեյսմիկ շրջանացման 1:500 000 մասշտաբի քարտեզի կազմում:
- II. Քարտեզի կազմման աշխատանքների ժամանակացույցը և հաշվետվությանը ներկայացվող պահանջները.
 1. Նախատեսվող աշխատանքներն իրականացնել 24 ամսվա ընթացքում, այն բաժանելով երկու փուլերի՝ ելնելով հաստատված նոր ՀՀՇՆ II-6.2-2006-ի գործադրման և լայն կիրառմամբ պայմանավորված հրատապությունից: Առաջին փուլում (15 ամիս) ստեղծել 1:500 000 մասշտաբի սխեմատիկ, իսկ երկրորդ փուլում (9 ամիս) նույն մասշտաբի լիարժեք սեյսմիկ շրջանացման քարտեզները:
 2. Կատարված աշխատանքների հաշվետվությունը՝ քարտեզներով և գրաֆիկական նյութերով, ներկայացվում է ՀՀ քաղաքաշինության նախարարություն՝ տպագրված, հայերեն՝ 5 օրինակ, ռուսերեն՝ 2 օրինակ, մագնիսական կրիչով՝ 3 օրինակ:
 3. Սեյսմիկ շրջանացման քարտեզի համար պատրաստվում է բացատրագիր:
 4. Քարտեզների կազմման աշխատանքային մասշտաբը 1:200 000 է, իսկ վերջնական սեյսմիկ շրջանացման քարտեզի մասշտաբը՝ 1:500 000:
 5. Սեյսմիկ շրջանացման քարտեզը գործողության մեջ է դրվում իր օրիգինալ (անփոփոխ) մասշտաբով և բացատրագրի հետ կցվում է նոր ՀՀՇՆ II-6.2-2006-ի յուրաքանչյուր օրինակին:

Նախահաշիվ և ժամանակացույց

ՀՀ տարածքի սեյսմիկ շրջանացման նոր քարտեզի կազմման աշխատանքի կատարման

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	Աշխատանքի արժեքը, մլն դրամ	Կատարման ժամկետը
1	2	3	4
1.	Արխիվային նյութերի ուսումնասիրում, այդ թվում. • ՀՀ տարածքի երկրաբանական և տեկտոնական կառուցվածքների հետազոտություն, • ակտիվ խզվածքների և այլ ակտիվ կառուցվածքային տարրերի առանձնացում	2.0	10.2009-03.2010
2.	Անհրաժեշտ դաշտային հետազոտություններ և ուսումնասիրություններ, այդ թվում. • մակրոսեյսմիկ տվյալների ուսումնասիրություններով երկրաշարժերի կատալոգի լրացում, • գործիքային գրանցումների ուսումնասիրություն և երկրաշարժերի կատալոգի համալրում	5.0	10.2009-03.2010
3.	1 և 2 կետերում նշված ուսումնասիրությունների արդյունքում տվյալների բազայի ստեղծում	5.0	10.2009-04.2010
4.	Սեյսմիկ ակտիվության քարտեզագրում և սեյսմիկության վերլուծություն, առանձնացված սեյսմիկ ակտիվության յուրաքանչյուր գոտու համար սեյսմիկ ռեժիմի վերլուծություն /սեյսմիկ ռեժիմի հիմնական պարամետրերի որոշում/.	3.0	04.2010-11.2011
5.	•Երկրակեղևի եռաչափ ֆիզիկա-երկրաբանական մոդելի կառուցմամբ ակտիվ խզվածքների քարտեզի կազմում` 1:500 000 մասշտաբի – ՀՀ և հարակից (ՀՀ սահմաններից 150 կմ հեռավորությամբ) տարածքների համար և 1:200 000 մասշտաբի – ՀՀ տարածքի համար •Երկրակեղևի եռաչափ դինամիկական ֆիզիկա-երկրաբանական մոդելի կառուցմամբ ակտիվ բլոկների քարտեզի կազմում` 1:500 000 մասշտաբի – ՀՀ և հարակից (ՀՀ սահմաններից 150 կմ հեռավորությամբ) տարածքների համար և 1:200 000 մասշտաբի – ՀՀ տարածքի համար	3.0	06.2010-01.2011
6.	Սեյսմատեկտոնական նոր մոդելի կառուցում և սեյսմաժին գոտիների ՀՀ տարածքի համար` 1:500 000 և հարակից տարածքների համար` 1:200 000 մասշտաբի քարտեզի կազմում	3.0	07.2010-03.2011
7.	Գրունտի արագացումների մարման մոդելի	2.0	06.2010-01.2011

	կառուցում. Սեյսմածին գոտիներից միջին կարգի գրունտային պայմանների համար /ՀՀ տարածքի՝ 1:200 000 մասշտաբին և ՀՀ հարակից տարածքների՝ 1:500 000 մասշտաբին համապատասխան/ առավելագույն հորիզոնական արագացումների գնահատում		
8.	Սեյսմածին օջախների գոտիների առանձնացում. տարբեր սեյսմոտեկտոնական մոդելների վերլուծություն՝ սեյսմածին գոտիների հնարավոր առավելագույն մագնիտուդների և երկրաշարժերի կրկնելիության պարբերությի վերագնահատմամբ	2.0	08.2010-04.2011
9.	Սեյսմածին օջախների գոտիներից երկրի մակերևույթի վրա սեյսմիկ ազդեցության որոշում. սեյսմիկ վտանգի հավանականային գնահատում	3.0	03.2011-06.2011
10.	Քարտեզագրման աշխատանքներ Հավանականային մեթոդով ՀՀ տարածքի սեյսմիկ շրջանացման 1:500 000 մասշտաբի քարտեզի կազմում	2.0	05.2011-08.2011
11.	Հաշվետվության կազմում, այդ թվում՝ քարտեզներ և գրաֆիկական նյութեր, 1:200000 մասշտաբի աշխատանքային և 1:500 000 մասշտաբի վերջնական սեյսմիկ շրջանացման քարտեզ, քարտեզի բացատրագիր	2.0	08.2011-10..2011
	Ընդամենը	32.0	10.2009-10..2011

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՀ ՏԱՐԱԾՔԻ ՍԵՅՄՈՒԿ ՇՐՋԱՆԱԳՄԱՆ ՆՈՐ ՔԱՐՏԵԶԻ ԿԱԶՄՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱՂՈՒՄՔԸ, ՆԱԽԱԿԱՇԻՎԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ տարածքի սեյսմիկ շրջանացման 1:500 000 մասշտաբի նոր քարտեզի մշակման «Սեյսմակայուն շինարարություն: Նախագծման նորմեր»-ի հին տարբերակում (ՀՀՇՆ II-2.02-94) սեյսմիկ վտանգի մակարդակը որոշվում էր ՀՀ տարածքի սեյսմիկ շրջանացման 1:500000 մասշտաբի քարտեզով, որը կազմված էր դետերմինիստական եղանակով, դրան կից ՀՀ բնակավայրերի ցանկով:

Նշված նորմերի վերամշակված և արդեն հաստատված նոր տարբերակում (ՀՀՇՆ II-6.02-2006) թողնված է նախկին հին քարտեզը, որը չի բավարարում նոր նորմերին և դրա փոփոխման անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով`

1. Քարտեզը կազմված է դետերմինիստական մոտեցումով, իսկ այժմ գրեթե ամբողջ աշխարհում սեյսմիկ սեյսմիկ շրջանացման քարտեզների կազմումը կատարվում է հավանականային գնահատմամբ:

2. Քարտեզում բացակայում են ակտիվ խզվածքներն ու դրանց ազդեցության 10 կմ-անոց գոտիները, որոնց շրջանակներում, համաձայն նոր նորմերի դրույթների, պետք է գործածվի 1,2 գործակիցը:

3. Հին քարտեզի կազմման ժամանակից անցած շուրջ 14 տարվա ընթացքում տեղի են ունեցել լուրջ տեղաշարժեր ՀՀ տարածքի ակտիվ տեկտոնիկայի, սեյսմաբանության, ինժեներային սեյսմաբանության և այլ ոլորտներում, կուտակվել են հուսալի ելակետային նյութեր, որոնք հիմք են հանդիսանալու նոր քարտեզի կազմման ժամանակ:

Նախատեսվող քարտեզը պետք է համապատասխանի նոր հաստատված «Սեյսմակայուն շինարարություն: Նախագծման նորմեր» ՀՀՇՆ II-6.02-2006-ի դրույթներին, մասնավորապես`

- 5.2.1 կետին, որտեղ նշված է, որ սեյսմակայուն շինարարությունը իրականացվում է երեք սեյսմիկ գոտիներում` 1, 2, 3` համապատասխանաբար 0.2g, 0.3g և 0.4g գրունտների հորիզոնական արագացումներով:

- 5.2.2 կետում նշված է, որ երրորդ սեյսմիկ գոտում այն շինարարական հրապարակների համար, որոնք տեղադրված են հնարավոր օջախային գոտիներից (ակտիվ բեկվածքներից) 10 կիլոմետրից պակաս հեռավորության վրա, գրունտների սպասվող արագացումները բազմապատկվում են 1.2 գործակցով` այսինքն, հաստատված նոր ՀՀՇՆ-ով սեյսմիկ գոտիները կլինեն համապատասխանող 0.2g, 0.3g և 0.4g արագացումներին:

Որոշման նախագիծը մշակվել է համաձայն «ՍՊՄ» Օրենքի գլուխ 2, հոդված 8, ե) կետի, 2008թ. մայիսի 15-ի ՀՀ կառավարության N 531-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի II մասի 2) կետի ա) ենթակետի և հավելված 3-ի III մասի 8 կետի 5) ենթակետի, ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման նախարարի տեղակալ պրն. Վ. Տերտերյանի մոտ 22. 11. 2005թ. կայացած խորհրդակցության թիվ 6-106 արձանագրության 2-րդ կետի:

ՀՀ տարածքի սեյսմիկ շրջանացման նոր քարտեզի մշակման տեխնիկական առաջադրանքի կազմմանը մասնակցել են. Ա. Անտոնյանը - ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ՍՊԱԾ գործակալություն, Ս. Նազարեթյանը - ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ՍՊՀԿՍԾ ՊՈԱԿ, Ս. Մարգարյանը - ՀՀ քաղաքաշինության նախարարություն, Ս. Հովհաննիսյանը - ՀՀ ԳԱԱ երկրաֆիզիկայի և ինժեներական սեյսմաբանության ինստիտուտ, Ա. Կարախանյանը - ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ`

Մ. ՇԱՀԳԵԼԴՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՀ ՏԱՐԱԾՔԻ ՍԵՅՍՄԻԿ ՇՐՋԱՆԱՑՄԱՆ ՆՈՐ ՔԱՐՏԵԶԻ ԿԱԶՄՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ, ՆԱԽԱՀԱՇԻԿԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՄՆԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՏՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման նախագիծը նախատեսում է բյուջեում ծախսերի ավելացում 32,0 մլն դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱԿԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ՝

Մ. ՇԱՀԳԵԼԴՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՀ ՏԱՐԱԾՔԻ ՍԵՅՍՄԻԿ ՇՐՋԱՆԱՑՄԱՆ ՆՈՐ ՔԱՐՏԵԶԻ ԿԱԶՄՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ, ՆԱԽԱՀԱՇԻԿԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ՝

Մ. ՇԱՀԳԵԼԴՅԱՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀՀ ՏԱՐԱԾՔԻ ՍԵՅՄՄԻԿ ՇՐՋԱՆԱՑՄԱՆ ՆՈՐ ՔԱՐՏԵԶԻ ԿԱԶՄՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱՂՐԱՆՔԸ, ՆԱԽԱՀԱՇԻԿԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՇԱՀԱԳՐԳԻՌ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ

N ^o ը/ կ	Առարկության կամ առաջարկության կողմնակր, ստացման ամսաթիվը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
1	2	3	4
1.	<p>1. ՀՀ քաղաքաշինության նախարարություն 14.08.2008</p> <p>2. ՀՀ քաղաքաշինության նախարարություն 04.03.2009.</p>	<p>1. Նախագծի հավելված 1-ում՝ ա. 2-րդ կետում «աշխատանքներն իրականացվել են» բառերը փոխարինել «աշխատանքներն իրականացնել» բառերով, բ. 2-րդ կետում և 2.4 ենթակետում «ՀՀՇՆ-ի» բառը փոխարինել «ՀՀՇՆ II-6.2-2006-ի» բառով:</p> <p>2. Նախագծում օգտագործված «քարտեզի մշակման» բառերը փոխարինել «քարտեզի կազմման» բառերով:</p> <p>3. Նախագծի հավելված 2-ում՝ ա. 2-րդ սյունակում աշխատանքների կազմը ներկայացնել համապատասխան տեխնիկական առաջադրանքի, բ. ճշտել 4-րդ սյունակում ներկայացված կատարման ժամկետները և դրանց համապատասխան որոշման նախագծի 3-րդ կետում առաջարկել ֆինանսավորման համար նախատեսվող ժամկետները և ծավալները:</p> <p>1. 2-րդ կետում «ելնելով հաստատված նոր ՀՀՇՆ II-6.2-2006-ի գործադրման և լայն կիրառմամբ պայմանավորված հրատարակությունից» բառերը փոխարինել «ելնելով «Սեյսմակայուն շինարարություն: Նախագծման նորմեր» ՀՀՇՆ II-6.2-2006-ի դրույթների առավել արդյունավետ կիրառման անհրաժեշտությունից» բառերով, 2. 2-րդ կետում ավելացնել նոր 2.5 ենթակետ հետևյալ բովանդակությամբ՝ «Սեյսմիկ շրջանացման քարտեզը պետք է համապատասխանի «Սեյսմակայուն շինարարություն: Նախագծման նորմեր» ՀՀՇՆ II-6.2-2006-ի դրույթներին»:</p>	<p>1. ա. Կատարվել է: բ. Կատարվել է:</p> <p>2. Կատարվել է:</p> <p>3. ա. Կատարվել են համապատասխան փոփոխություններ: բ. Կատարվել է:</p> <p>1. Կատարվել են առաջարկված խմբագրական համապատասխան փոփոխություններ :</p> <p>2. Չի ընդունվում, նկատի ունենալով, որ սեյսմամիկրոշրջանացման քարտեզում գրունտի սպասվելիք հորիզոնական արագացման մեծությունը</p>

			<p>կոնկրետ չափվող և հաշվարկվող մեծություն է և չի կարող ընդունվել կամայականորեն և համապատասխանեցվել ՀՀՇՆ II-6.2-2006-ի դրույթներին, որը արտացոլված է «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածում՝ «սեյսմոմիկրոշրջանացման քարտեզները հիմք են ՀՀ սեյսմակայուն շինարարության նախագծման նորմերի, հողօգտագործման, բնակչության տարաբնակեցման սխեմաների մշակման համար:»:</p>
2.	3. ՀՀ ֆինանսների նախարարություն 13.03.2009.	<p>Պետական բյուջեում նախատեսվում է կառավարության պահուստային ֆոնդ, որը տվյալ տարվա պետական բյուջեով չկանխատեսված, ինչպես նաև բյուջետային երաշխիքների ապահովման ծախսերի ֆինանսավորման աղբյուր է:</p>	<p>Չի ընդունվում. որոշման նախագիծը մշակվել է, նկատի ունենալով, որ այն դեպքում, երբ վերանայվել են ՀՀ ամբողջ տարածքի սեյսմիկ պայմանները, որի արդյունքում երկրաշարժից սեյսմիկ ազդեցության գնահատականը բարձրացել է 1-2 բալով, և այդ կապակցությամբ ներկայումս հանրապետության տարածքի շուրջ 80 և ավելի տոկոսը հայտնվել է VIII և ավելի բալ ինտենսիվության գոտում՝ Հայաստանում գործող, ՀՀ քաղաքաշինության նախարարի կողմից հաստատված «Սեյսմակայուն շինարարություն: Նախագծման նորմեր» ՀՀՇՆ II-6.02-2006-ում ներդրված է «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքի հոդված 8-ի ե) կետի անտեսմամբ կի-</p>

		<p>Միաժամանակ.</p> <p>1. Բացակայում են նախագծի հավելված 2-ում բերված ՀՀ տարածքի սեյսմիկ շրջանացման նոր քարտեզի կազմման աշխատանքների ֆինանսական գնահատականների հաշվարկային հիմնավորումները:</p> <p>2. Նախագծի 4-րդ կետում հստակեցված չէ գումարի հատկացման նպատակը, ինչպես նաև նշված չէ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածն ու հատկացումների տրամադրման եռամսյակային (աճողական) համամասնությունները:</p>	<p>րառվող հին, արդի պայմաններին չբավարարող ՀՀ տարածքի սեյսմիկ շրջանացման քարտեզ:</p> <p>1. Չի ընդունվում, աշխատանքների ֆինանսական գնահատականները բերված են, նկատի ունենալով նմանատպ աշխատանքների շուկայական արժեքները, հաշվարկների հիմնավորումների համար հաստատված նորմատիվներ չկան:</p> <p>2. Ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան լրամշակում:</p>
--	--	--	---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ՝

Մ. ՇԱՀԳԵԼԴՅԱՆ

«ՀՀ ՏԱՐԱԾՔԻ ՍԵՅՄՄԻԿ ՇՐՋԱՆԱՑՄԱՆ ՆՈՐ ՔԱՐՏԵԶԻ ԿԱԶՄՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ, ՆԱԽԱՀԱՇԻԿԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԿԱԶՄՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ .

Նախագիծը մշակել են Ա. Անտոնյանը, Հ. Պետրոսյանը, Ռ. Բաղդասարյանը, Հ. Հարությունյանը: